ԱՐՇԱԿՅԱՆ Ա., Արցախյան գոյապայքար (1985 թ.-1992 թ.), «Լինգվա» հրատ., Ե., 2004, 245 էջ:

Մեր նորօրյա պատմության մեջ իր ուրույն տեղն ունի արցախահայության ազատագրական պայքարը: Այն ավելի քան յոթ տասնամյակի վերք ու տառապանք ունի: Արցախյան գոյապայքարի նոր և աննախադեպ հզոր պոռթկումը տեղի ունեցավ 1988 թ. փետրվարին՝ 1991 թվականից վերածվելով իսկական պատերազմի:

Սակայն ԼՂՀ անկախության համար պայքարի առաջին փուլը սկզբնավորվեց «վերակառուցումից» սկսած, երբ արցախահայությունը պայքարի ելավ անցյալի սխալներն ուղղելու համար և ավարտվեց Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմում վճռորոշ նշանակություն ունեցող հաղթանակներով՝ հատկապես Շուշիի և Լաչինի ազատագրմամբ, որը բեկումնային նշանակություն ունեցավ այդ պայքարում: Հենց Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարի այս դյուցազներգությանն է նվիրված Անդրանիկ Արշակյանի գրախոսվող աշխատությունը: Հեղինակի ուսումնասիրության առարկան 1985-1992 թթ. Արցախյան գոյապայքարն է: Հեղինակը, խորամուխ չլինելով քաղաքական, դիվանագիտական ձեռնարկումների, հակամարտության կողմ երկրների ներքաղաքական զարգացումների, սոցիալ-տնտեսական իրավիճակին վերաբերող հարցերի մեջ, դրանց անդրադարձել է այնքանով, որքանով առնչվում են թեմային: Ա. Արշակյանն առաջիններից մեկն է, որն Արցախի ազատագրական պատերազմի բազմակողմանի ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա կատարել է մեր ժողովրդի՝ ոչ հեռու անցյալի ռազմական սխրագործության վերաիմաստավորումը, այն դարձնելով հայոց պատմագիտության սեփականությունը:

Լինելով այդ իրադարձությունների մասնակից՝ հեղինակն անձամբ ճանաչել և զինակցել է արցախյան պատերազմի զորահրամանատարներից շատերին, տեսել նրանց ռազմական տաղանդի դրսևորումը, հայ զինվորականության հերոսությունն ու անձնվիրությունը, ռազմական փայլուն հաղթանակներին նախորդած ու հաջորդած կարևոր իրադարձությունների զարգացման միտումները: Դրանց հիման վրա նա պատմական անհրաժեշտ փաստերով, հաճախ անձնական արխիվների տվյալներով, բացահայտել է արցախյան ազատագրական պայքարի ընթացքը, պատմական նշանակությունը, ռազմական գործողությունների, պաշտպանական ու ազատագրական առաջին մարտերի արդյունքները: Ա. Արշակյանն իր առջև խնդիր է դրել՝ հենվելով հիմնականում նորահայտ փաստաթղթերի, վիճակագրական տվյալների, պարբերական մամուլի, ժամանակակիցների հրատարակած և չհրատարակած հուշագրությունների և այլ պատմագիտական նյութերի վրա՝ բազմակողմանի ուսումնասիրել և գիտականորեն ընդհանրացրել Արցախի ազատագրական պայքարի նախադրյալների, դրա սկզբնավորման, այդ պայքարի շուրջ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայության համախմբման և ծանր պայմաններում տարած փայլուն հաղթանակների առաջին փուլի արդյունքները:

Աշխատության գիտական նորույթը հիմնախնդրի դրվածքի՝ արցախյան ազատագրական պայքարի առաջին փուլի ամբողջական հետազոտման մեջ է, որը դիտվում է իբրև առաջին փորձ: Գրքում հերթականությամբ բնութագրվում և նորովի են գնահատվում պայքարի վրա ազդած օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր գործոնները՝ դրա սկզբնավորումից մինչև Լաչինի ազատագրումը: Հեղինակը փորձում է հիմնավորել, որ արցախյան ազատագրական պայքարի պատմությունը սկսվում է ոչ թե 1988 թ. փետրվարի 20-ից, ինչպես ներկա- յացվում է գրականության մեջ, այլ՝ 1980-ական

թվականների կեսերից, գորբաչովյան «վերակառուցման» հռչակումից անմիջապես հետո, երբ այն նոր թափով դրսևորվեց, և պայքարը նպատակաուղղվեց դեպի անկախություն:

Աշխատությունն ունի կուռ կառուցվածք, գեղեցիկ ու սահուն շարադրանք, խոր բովանդակություն: Այն կազմված է առաջաբանից, երեք գլուխներից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Առաջաբանում հիմնավորված են թեմայի այժմեականությունը, գիտագործնական նշանակությունը, ընտրված ժամանակահատվածի կարևորությունը, ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության և աղբյուրների տեսությունը: Հեղինակը, լավատեղյակ լինելով թեմայի պատմագրությանը, այն վերլուծել է որոշ քննադատական մոտեցումներով, որը, անշուշտ, բարձրացնում է աշխատության արժանիքը:

Գրքի առաջին գլուխը, որն ընդգրկում է 14-39 էջերը, վերնագրված է «Արցախյան շարժման սկզբնավորումը»: Այստեղ հեղինակը քննել է Արցախում շարժման սկզբնավորման և այն համազգային պայքարի վերաճելու գործընթացը, երբ 1980-ական թվականների կեսերից սկսած՝ շարժումը հետզհետե վերելք ապրեց և 1988 թ. փետրվար-մարտին վերածվեց համազգային պայքարի: Միանգամայն ճիշտ է նկատում հեղինակը, երբ գտնում է, որ վերակառուցման հետևանքով և ԽՍՀՄ-ում սկիզբ առած քաոսային իրավիճակի պայմաններում գնալով ավելի սրվեցին հակասությունները կենտրոնի ու ազգային հանրապետությունների միջև, և կրկին ասպարեզ իջավ Արցախ-Ղարաբաղի հիմնահարցը: Այսպիսով, ստեղծվել էր մի վիճակ, երբ Արցախը կամ պետք է արժանանար Նախիջևանի ճակատագրին և լրիվ հայաթափվեր, կամ էլ ժողովուրդը պետք է պայքարի ելներ իր բնօրրանը, մարդկային իրավունքները և ազգային արժանապատվությունը պաշտպանելու համար: Պայքարը սկսելով ստորագրահավաքներով՝ արդեն 1987 թ. ամռանն ու աշնանը պայքարի նվիրյալներն անցկացրին ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու նպատակով (80 հազար ստորագրությամբ) ոչ պաշտոնական հանրաքվե: Մինչև փետրվարի կեսերը Մոսկվա ուղարկվեց ևս երկու պատվիրակություն, որոնք վերադարձան առանց արդյունքների: Հեղինակը ներկայացրել է Բաքվի կողմից իրականացվող ահաբեկումները, ճնշման ու հալածանքի տարբեր ձևերն ու մեթոդները, ընդհուպ մինչև զանգվածային ջարդերն ու թալանը հայաշատ վայրերում՝ Սումգայիթում, Բաքվում, Շուշիում, Կիրովաբադում, Մինգեչաուրում, Աղդամում, Շամախիում: Ա. Արշակյանն այնուհետև անդրադարձել է ղարաբաղյան շարժման ղեկավարման նպատակով 1988 թ. փետրվարի 22-ին Երևանի Թատերական հրապարակում ձևավորված «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծմանը, նրա կազմին ու գործունեությանը: Նա լուսաբանել է նաև Ստեփանակերտում «Կռունկ» հասարակական կազմակերպության ստեղծումն ու գործունեությունը, ապա դրան փոխարինած «Տնօրենների խորհրդի» աշխատանքները:

Երկրորդ գլխում (էջ 40-200), որն ամենաընդարձակն է և վերնագրված է «Զինված ընդհարումներից մինչև Արցախի անկախացումը» (1988 թ. գարուն – 1991 թ. սեպտեմբեր), գրախոսվող մենագրության հեղինակը բացահայտել է Մոսկվայի և Բաքվի հակահայկական դիրքորոշման նոր դրսևորումները (1988 թ. հուլիս – 1989 թ. սեպտեմբեր) և հայերի տեղահանումները՝ որպես Ադրբեջանի պետական քաղաքականության հարցեր: Փաստարկվել է նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. հուլիսի 18-ի որոշման ծանր ազդեցությունն արցախահայության վրա: Ադրբեջանական իշխանությունները, շարունակելով օգտվել Մոսկվայի հովանավորությունից, 1991 թ. սկզբից ավելի կոշտացրին իրենց հակաղարաբաղյան քաղաքականությունը, որն առավել սրեց իրադրությունը:

Օգտվելով պատմական պահից, 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որն էլ ընդունեց Հռչակագիր՝ ԼՂԻՄ-ի և դրան կից Շահումյանի շրջանի սահմաններում ԼՂՀ հռչակելու մասին:

Երրորդ գլխում՝ «Հայ-ադրբեջանական չհայտարարված պատերազմի առաջին փուլը» (էջ 201-234) քննվում է ԼՂՀ կայացումը՝ որպես արցախյան հիմնահարցի լուծման միջոց (1991 թ. սեպտեմբեր – 1992 թ. հունվար), Շուշիի գրավումը և Արցախ-Հայաստան անմիջական կապի հաստատումը: Միանգամայն ճիշտ է նկատում հեղինակը, երբ գրում է, որ ԼՂՀ հռչակումը չէր կարող անտարբեր թողնել ռազմատենչ Բաքվին և նրա գլխավոր հովանավոր Թուրքիային: Ստեղծված պայմաններում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման միջնորդի և երաշխավորի դերը ստանձնեցին Ռուսաստանի ու Ղազախստանի նախագահները, որոնք ոչ միայն բանակցություններ վարեցին Արցախի ղեկավարության հետ, այլև սեպտեմբերի 23-ին Ժելեզնովոդսկում հայտարարություն արվեց, որով դրվեց բանակցությունների միջոցով արցախյան հիմնահարցի լուծման գործընթացի սկիզբը: Կարևորելով Շուշիի ազատագրման ռազմական գործողությունները՝ Ա. Արշակյանը, իբրև մասնակից և ականատես, մանրամասն վերլուծել է դրանք՝ հիմնավորելով Շուշիի գրավման անհրաժեշտությունը, նախապատրաստման շրջանը, ընթացքը, և պատմական նշանակությունը՝ որպես ժամանակի գերխնդիր, նշելով Հայաստանի հետ ճանապարհային ուղիղ կապ ունենալու հանգամանքը: Լաչինի միջանցքի բացումն իրավացիորեն դիտարկվել է որպես Շուշիի ռազմական գործողության տրամաբանական շարունակություն և Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգնման կենսական պահանջի արգասիք: Վերջաբանում հանրագումարի են բերվել հետազոտության հիմնական արդյունքները, կատարվել մի շարք եզրակացություններ ու ընդհան-րացումներ:

Այսպիսով, շնորհիվ Ա. Արշակյանի տքնաջան պրպտումների, առաջին անգամ համապատասխան փաստաթղթերի և արխիվային հարուստ նյութերի վերլուծությամբ ուսումնասիրվել են նոր պայմաններում Արցախի ազատագրական շարժման սկզբնավորումը, ընթացքը և պատերազմում տարած ռազմական փայլուն հաղթանակները:

Այս արժանիքների կողքին գրախոսվող աշխատության մեջ տեղ են գտել նաև որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ: Ճիշտ է, հեղինակը առանձին փաստերով փորձում է հիմնավորել Արցախի ազատագրական պատերազմի համազգային բնույթը, սակայն, մեր կարծիքով, կատարվածը բավարար չէ: Կարելի էր փաստեր բերել (իսկ դրանք շատ են), ցույց տալու, որ արցախյան շարժման ընթացքում հայ ժողովրդի զավակները ոչ միայն Արցախից, այլև բուն Հայաստանի տարբեր շրջաններից գործուն մասնակցեցին պատերազմին, ինչը աշխատությունում հստակ չի երևում: Հեղինակն աղբյուրների որոշ մասը բավարար չի վերլուծել, թեպետ առանձին աղբյուրներ, որոնք վերաբերում են պատերազմին, լուրջ քննվել են: Չնայած ամփոփման մեջ կատարված են անհրաժեշտ եզրակացություններ, սակայն դրանք կարելի էր ավելի հստակեցնել և տալ կետերով, որպեսզի ավելի պարզ ու հասկանալի լինեին ընթերցողին:

Նշված թերությունները, ինչ խոսք, չեն նսեմացնում Ա. Արշակյանի կատարած գիտական ուսումնասիրության արժանիքները: Գրախոսվող մենագրությունը իրապես խորն ու բազմակողմանի ուսումնասիրություն է:

ՄԻՆԱՍՅԱՆ Է. Գ.
Պատմական գիտությունների դոկտոր